ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ Սյունիքի ՏՄՏ Մեղրու մաքսակետ տանող ճանապարհի արտաքին լուսավորության շինարարական աշխատանքների կատարման ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 14.06.2017թ. N 59/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Կանդանովը, Հ.Մակարյանը, Դ.Շատվերյանը, Ա.Եղիազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**<u>Օրակարգ</u>**

***<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>***

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն (ք. Եղվարդ, Պ.Սևակի-1/51)
2. «Մավշին» ՍՊԸ-ն (ՀՀ Վայոց Ձորի մարզ, գյուղ Զառիթափ)
3. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն (ք. Երևան, Նուբարաշենի 11թ. 21/26)

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

-«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի, «Մավշին» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի, «Մավշին» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակիցների կողմից մասնակցության հայտի ապահովումը ներկայացված է միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով: Մասնակիցները հայտի ապահովումը պետք է ներկայացնեին կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | | | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | | | Նախահաշվային գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ | «Մավշին» ՍՊԸ | «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ | «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ | «Մավշին» ՍՊԸ | «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ ԿԱ ՊԵԿ Սյունիքի ՏՄՏ Մեղրու մաքսակետ տանող ճանապարհի արտաքին լուսավորության շինարարական աշխատանքներ | 121121121 | 128700000 | 113100000 | 121121121 | 154440000 | 135720000 | **159 756 884** |

*«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Համաձայն հրավերի 8.2 կետի՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի, «Մավշին» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը մերժել՝ քանի որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին (մասնակիցների կողմից մասնակցության հայտի ապահովումը ներկայացված է միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով, այլ ոչ թե կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը):

-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյան

Անդամներ՝ Ա.Կանդանով

Հ.Մակարյան

Դ.Շատվերյան

Ա.Եղիազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան